Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 3

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2025-2026 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան 20 հոկտեմբերի 2025թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 14–ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. **Ֆարմացիայի ինստիտուտի «Ֆարմացիա» կրթական ծրագրի առկա ուսուցման 2025/2026 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման հարցը:** Զեկուցող՝ ավարտական աշխատանքները վերահսկող հանձնաժողովի նախագահ Ս. Պետրոսյան
2. **Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրատուրայի «Ֆարմացիա» և «Դեղերի որակի վերահսկում» կրթական ծրագրերի 2025/2026 ուսումնական տարվա մագիստրոսական թեզերի թեմաների և ղեկավարների հաստատման հարցը:** Զեկուցող՝ մագ. թեզերը վերահսկող հանձնաժողովի նախագահ Ա. Գեոլչանյան
3. **Ընթացիկ հարցեր.**

3.1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն, ք.գ.թ., դոցենտ Աննա Մկրտչյանի և Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ Հովիկ Փանոսյանի կողմից 2026-2027 ուս. տարվա ասպիրանտուրայի ընդունելության տեղերի հատկացման համար ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ներկայացվող հայտերի թեմաների քննարկման և գիտական խորհրդի կողմից երաշխավորման հարցը:

3.2. ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն, ք.գ.թ., դոցենտ Աննա Մկրտչյանին ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ ատենախոսական աշխատանք ղեկավարելու թույլտվություն ստանալու հարցը:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. **Ֆարմացիայի ինստիտուտի «Ֆարմացիա» կրթական ծրագրի առկա ուսուցման 2025/2026 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման հարցը:**

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի «Ֆարմացիա» կրթական ծրագրի ավարտական աշխատանքները վերահսկող հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Պետրոսյանին, ով հաղորդեց, որ ինստիտուտի ամբիոններում կայացած նիստերում քննարկվել և գիտխորհրդի հաստատմանն են ներկայացվել «Ֆարմացիա» կրթական ծրագրերի ուսանողների ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների անվանացանկը:

Ելույթ ունեցան՝ Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Հայարփի Սիմոնյանը, Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ Անահիտ Հովհաննիսյանը, Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ Հովիկ Փանոսյանը, ովքեր առաջարկեցին հաստատել «Ֆարմացիա» կրթական ծրագրերի ուսանողների ավարտական աշխատանքների թեմաները և ղեկավարներին:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրատուրայի «Ֆարմացիա» կրթական ծրագրի ուսանողների ավարտական աշխատանքների թեմաները և ղեկավարներին:

2. **Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրատուրայի «Ֆարմացիա» և «Դեղերի որակի վերահսկում» կրթական ծրագրերի 2025/2026 ուսումնական տարվա մագիստրոսական թեզերի թեմաների և ղեկավարների հաստատման հարցը:**

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրոսական թեզերը վերահսկող հանձնաժողովի նախագահ, Կենսաբժշկագիտության ամբիոնի դոցենտ ք.գ.թ. Ա.Վ. Գեոլչանյանը, ով հաղորդեց, որ ինստիտուտի ամբիոններում կայացած նիստերում քննարկվել և գիտխորհրդի հաստատմանն են ներկայացվել «Ֆարմացիա» և «Դեղերի որակի վերահսկում» կրթական ծրագրերի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաների և ղեկավարների անվանացանկը:

Ելույթ ունեցան՝ Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Հայարփի Սիմոնյանը, Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչի ժ/պ Խաչիկ Հակոբյանը, Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ Անահիտ Հովհաննիսյանը, ովքեր առաջարկեցին հաստատել «Ֆարմացիա» և «Դեղերի

որակի վերահսկում» կրթական ծրագրերի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաները և ղեկավարներին:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրատուրայի «Ֆարմացիա» և «Դեղերի որակի վերահսկում» կրթական ծրագրերի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաները և ղեկավարներին:

3. Ընթացիկ Հարցեր:

3.1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն, ք.գ.թ., դոցենտ Աննա Մկրտչյանի և Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ Հովիկ Փանոսյանի կողմից 2026-2027 ուս. տարվա ասպիրանտուրայի ընդունելության տեղերի հատկացման համար ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ներկայացվող հայտերի թեմաների քննարկման և գիտական խորհրդի կողմից երաշխավորման հարցը:

Եղույթ ունեցավ՝ Աննա Մկրտչյանը, ով համառոտ ներկայացրեց հայտերի վերնագրերը և համառոտ բովանդակությունները: Ներկայացվող հայտերի ընդհանուր թեման է. «Նոր մոտեցում էնանտիոմերներով հարստացված ոչ սպիտակուցային α-ամինաթթուների սինթեզ՝ օգտագործելով A³-Մաննիխի միացման ռեակցիա և քիրալային Ni(II)-ի պրոպարգիլգլիցինի հարթ–քառակուսային կոմպլեքսները», Դրանցից առաջինի հիմնական նպատակն է մշակել էնանտիոմերապես հարստացված (*S*)-α-ամինաթթուների սինթեզի մեթոդներ, ինչպես նաև ուսումնասիրել հարթ–քառակուսի նիկելի կոմպլեքսները՝ որպես սինթոններ տարբեր քիմիական անվանական ռեակցիաներում: Հայտը ներկայացվում է ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ ասպիրանտուրա ընդունելության տեղի հատկացման համար:

Երկրորդ հայտի շրջանակներում նախատեսվում է քիրալայի սալենային լիգանդների վրա հիմնված մետաղական կոմպլեքսների նոր դասի մշակում և սինթեզ, ինչպես նաև դրանց կատալիտիկ ակտիվության ուսումնասիրություն մոդելային օրգանական ռեակցիաներում: Ռեակցիաների ընթացքի մեխանիզմի և դրանց ստերեո- ու ռեգիոսելեկտիվությունը որոշող գործոնների ավելի խորքային ըմբռնման նպատակով կիրականացվեն տեսական հաշվարկներ՝ խտության ֆունկցիոնալ տեսության (DFT) հիման վրա:

Ա. Մկրտչյանը հավելեց, որ այս հայտը ներկայացվում է Բ.00.10 «Կենսօրգանական քիմիա» թվանիշով ասպիրանտուրա ընդունելության տեղի համար:

Որոշեցին՝ (միաձայն) երաշխավորել Աննա Մկրտչյանի կողմից ներկայացված հայտերը՝ 2026-2027 ուս. տարվա ասպիրանտուրա ընդունելության տեղերի հատկացման համար:

Ելույթ ունեցավ՝ Հովիկ Փանոսյանը, ով ներկայացրեց հայտերի վերնագրերը և համառոտ բովանդակությունները: Նա նշեց, որ առաջին հայտը նվիրված է Հայաստանի երկրաջերմային աղբյուրներից մեկուսացված թերմոֆիլ կերատինազ արտադրող մանրէների ուսումնասիրությանը՝ կերատինային թափոնների կենսատեխնոլոգիական վերամշակմամբ արժեքավոր կենսաակտիվ միացությունների ստացման նպատակով:

Երկրորդ հայտի թեման է՝ Հայաստանում տարածված անոթավոր սպորավոր որոշ դեղաբույսերի էնդոֆիտային միկրոբիոտան և կենսաբանական առանձնահատկություններում դրա դերի ուսումնասիրությունը: Հ. Փանոսյանը նշեց, որ երկու հայտերն էլ ներկայացվում են Գ.00.07 «Միկրոբիոլոգիա. կենսատեխնոլոգիա» թվանիշով ասպիրանտուրա ընդունելության տեղերի համար:

Որոշեցին՝ (միաձայն) երաշխավորել Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Հովիկ Փանոսյանի կողմից ներկայացված հայտերը՝ 2026-2027 ուս. տարվա ասպիրանտուրա ընդունելության տեղերի հատկացման համար:

3.2. ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն, ք.գ.թ., դոցենտ Աննա Մկրտչյանին ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ ատենախոսական աշխատանք ղեկավարելու թույլտվություն ստանալու հարցը:

Ելույթ ունեցավ՝ գիտական խորհրդի քարտուղար Ա. Դադայանին, ով հաղորդեց այն մասին, որ Ա. Մկրտչյանի կողմից 2026-2027 ուս. տարվա ասպիրանտուրա ընդունելության տեղերի հատկացման համար ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ հայտ է ներկայացվել, ուստի անհրաժեշտ է նաև ստանալ ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի թույլտվությունը՝ նշված թվանիշով ատենախոսական աշխատանք ղեկավարելու համար: Համաձայն կարգի՝ թույլտվություն ստանալու համար պետք է ներկայացվի կազմակերպության ղեկավարի միջնորդությունը և թեկնածուի՝ համապատասխան գիտական բնագավառում առնվազն 30 տպագիր գիտական

աշխատանքների ցուցակը, որոնցից առնվազն 5-ը՝ վերջին հինգ տարում: Ա. Դադայանը հավելեց, որ Աննա Մկրտչյանն ունի բավարար թվով գիտական հրապարակումներ և Բ.00.10 «Կենսօրգանական քիմիա» մասնագիտությամբ ատենախոսական աշխատանք ղեկավարելու փորձ:

Որոշեցին՝ (միաձայն) դիմել ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանին՝ միջնորդելու ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին՝ Աննա Մկրտչյանին ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ ատենախոսական աշխատանք ղեկավարելու թույլտվություն ստանալու համար:

Գիտական խորհրդի նախագահ՝
ք.գ.թ, դոցենտ **Ա. Մկրտչյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝
ք.գ.թ., դոցենտ **Ա. Դադայան**